

Հետազոտական
գործունեության ըմբռնում
Երիտասարդական
աշխատանքի
համատեքստում

Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ



Սոցիալական ծրագիրը՝ որպես միջամտություն

- ▶ Ցանկացած սոցիալական ծրագիր իրենից ներկայացնում է միջամտություն անձի/ սոցիալական խմբի / սոցիումի կենսագործունեության ընթացքին:
- ▶ Կարևոր են սոցիալական ծրագրի էթիկական կողմերի պահպանումը:
- ▶ Ինչը պետք է հիմնված լինի իրական խնդրի
 - ▶ Առկայության,
 - ▶ Դրա ճիշտ ըմբռնման,
 - ▶ Դերակատարների դուրսբերման,
 - ▶ Գործողությունների հաջորդականության պարզման,
 - ▶ Խնդիրների լուծման իրատեսական լուծումների սահմանման վրա:

Մոցիալական ծրագրի տեսակները

- ▶ Դրանք կարող են իրականացվել՝ ելնելով մեր պատկերացումներից ու գիտելիքներից, թե շահառուները ինչպիսի կարիքներ ունեն, կամ ինչպիսին ենք մենք ուզում տեսնել նրանց որոշակի գործողություններից կամ ժամանակից հետո:
- ▶ Կարող են լինել մասնակցային բնույթի՝ շահառուների հետ միասին նրանց ակտիվ մասնակցությամբ խնդիրների դուրսբերում, իրավիճակի վերլուծություն, որոշումների կայացում, խնդիրների լուծմանն ուղղված գործընթացների իրականացում:

Երիտասարդական աշխատանքը՝ որպես սոցիալական ծրագիր-գործունեություն

- ▶ Քանի որ երիտասարդական աշխատանքը ենթադրում է գործունեություն՝ ուղղված երիտասարդների բարեկեցության (well-being) լավացման, ուստի այն ենթադրում է ինչ-որ տեսակի միջամտություն՝
 - ▶ Քաղաքականությունների մշակման գործընթացում,
 - ▶ Երիտասարդներին ուղղված ծրագրերի իրականացում,
 - ▶ Երիտասարդների մասնակցության ապահովում տարբեր գործընթացներում
 - ▶ Եվ այլն . . .:

Հետազոտությունները որպես Երիտասարդական աշխատողի գրագետ գործունեության «այբուբեն»

- ▶ Հետախուզական (ինտերնետում որոնումներ, մասնագիտական գրույցներ, դիտարկումներ) գործունեություն, գրականության ուսումնասիրություն, փաստաթղթերի ուսումնասիրություն,
- ▶ Հետազոտական գործունեություն,
- ▶ Ունեցած տվյալների նկարագրողական ու վերլուծական գործունեություն:

- ▶ Հետազոտական տվյալների վրա հիմնված՝
 - ▶ Խնդիրների բարձրաձայնում,
 - ▶ Նախաձեռնություններ,
 - ▶ Երիտասարդական ծրագրեր:

Երիտասարդը՝ որպես տեղեկատվություն կրող և որպես հետազոտության շահառու

- ▶ Քանի որ երիտասարդական աշխատանքի ցանկացած գործողություն պետք է ուղղված լինի
- ▶ վերջնական նպատակով երիտասարդների կյանքի բարելավմանը,
- ▶ նրանց՝ երկրի տարբեր գործընթացներում ակտիվացմանը,
- ▶ ապա երիտասարդական աշխատանքի համատեքստում
- ▶ երիտասարդը հանդես է գալիս ոչ միայն և ոչ այնքան որպես տեղեկատվության կրող,
- ▶ այլ **հետազոտության շահառու**, հետագա նախաձեռնությունների **ազդակիր**:

Գրագետ հետազոտությունը՝ որպես որոշումների կայացման հիմք և հիմնավորում

- ▶ Դուք կարող եք հիմնվել հետազոտության արդյունքների վրա, եթե
 - ▶ Հետազոտությունը հիմնած է եղել գրագետ ներկայացուցչական ընտրանքի վրա
 - ▶ Որակական հետազոտությունում պետք է ներգրավված լինեն իրավիճակի դերակատարների բոլոր կատեգորիաները,
 - ▶ Որակական հետազոտությունը պետք է իր կոնցեպտուալ կատեգորիաների հազեցվածության հասնի,
 - ▶ Քանակական հետազոտությունը պետք է վիճակագրորեն ներկայացուցչական լինի գլխավոր համախմբության նկատմամբ, և արդյունքների վերլուծականը կառուցված լինի ներկայացուցչականության հիմքի վրա:
 - ▶ Հետազոտության վերլուծական կատեգորիաները ընտրված են ճիշտ և բնութագրում են խնդրի տրամաբանական շրջանակը (framework) համապարփակ կերպով:

Երբ կիրառել որ տեսակի հետազոտությունները

- ▶ Եթե մենք ուզում ենք հասկանալ պրոբլեմի տրամաբանական շրջանակը, դրա ծագման, գոյության առանձնահատկությունները՝ հնարավոր զարգացման մոդելների (վարկածների) դուրսբերման հնարավորությամբ, մենք կիրառում ենք **ՈՐԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ**:
- ▶ Եթե մենք արդեն ունենք պրոբլեմի ըմբռման մեր հայեցակարգային մոդելը (կոնցեպտուալ և օպերացիոնալ շրջանակը), և ուզում ենք հասկանալ դրսևորման առանձնահատկությունները՝ որ խմբերի մոտ ինչպես, ինչ հաճախականությամբ է այն արտահայտվում, որ փոփոխականներն են միմյանց հետ կապված, այստեղ մենք պետք է կիրառենք **ՔԱՆԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ**-ները:

Հետազոտական մեթոդաբանություններ

- ▶ M&E հետազոտություններ
 - ▶ Monitoring
 - ▶ Assessment
 - ▶ Evaluation
- ▶ Մասնակցային հետազոտությունների
- ▶ Կանխատեսումներ, տրենդային վերլուծություններ

Հետազոտության
փուլերը



Հետազոտության կիրառումը
ԵԱ-ում

Առկա թեմատիկ
հետազոտությունների
ուսումնասիրություն

Երկրորդային տվյալների
վերլուծություն

Նախաձեռնություն

Չուսումնասիրված խնդրի
բացահայտում,
բարձրաձայնում

Երիտասարդական
ծրագրի մշակում



Կապ
հետազոտողների հետ
(ԵՈՒԻ կողմից
խորհրատվություն)

Առկա խնդրի
շահառուների
սահմանում

Առկա խնդրի
իրավիճակի
դերակատարների
բացահայտում

Տեղեկատվության հավաքագրման մեթոդները


▶ Քանակական


- ▶ Հարցում
- ▶ Ցուցանիշների գրանցում
- ▶ Տեքստի քանակական վերլուծություն
- ▶ Ժամանակային շարքերի օգտագործում

▶ Որակական

- ▶ Տեքստի բովանդակային/ կոնցեպտուալ վերլուծություն
- ▶ Անհատական որակական հարցազրույց
- ▶ Ֆոկուս-խմբային հարցազրույց

- ▶ Խմբային հարցազրույցի մեթոդը վիճարկվում է՝ իր միաժամանակ քանակական և որակական բնույթով:





Որակական հարցազրույցի տեսակները

- ▶ Խորին հարցազրույց
- ▶ Մշակութային հարցազրույց
- ▶ Թեմատիկ հարցազրույց
- ▶ Բանավոր պատմություններ
- ▶ Կյանքի պատմություններ կամ կենսագրական հարցազրույց
- ▶ Քնահատող հարցազրույց
- ▶ Ֆոկուսավորված հարցազրույց

Որակական հարցազրույց

- ▶ Սկիզբը և վերջը հստակ չեն
- ▶ Հարցերի հաջորդականությունը կախված է իրավիճակից
- ▶ Հարցազրույցավարը հետաքրքրված է հարցվողի պատասխաններով
- ▶ Անհրաժեշտության դեպքում հետազոտողը կարող է խնդրել հարցվողին մանրամասնել պատասխանը կամ բերել օրինակներ
- ▶ Նման է ընկերական զրույցի՝ ըստ որոշակի հարցաշարի
- ▶ Ուղեկցվում է պատմություններով, կատակներով, դեպքերի նկարագրմամբ
- ▶ Հարցերը բաց են, ենթադրում են ազատ ոճի պատասխան

Արժեքներ, սկզբունքներ

- ▶ Հարցվողների անանունության պահպանում
- ▶ Պիտակավորման բացառում
- ▶ Դրական տրամադրվածություն
- ▶ Համագործակցության հակում
- ▶ Քննադատական մոտեցում
- ▶ Հնարավորությունների գնահատում
- ▶ Խնդրի լուծման մի քանի մոդելների հմաժամանակյա դիտարկում
- ▶ Խնդիրների լուծման մասնակցային մոտեցում, երիտասարդների ներգրավում

Հարցեր.....



..... քննարկում